յին, և յառաջագոյն գրեցաւ Աբէլ և Իլամ առ Տէրութիւնն, եւ այժմ ոչ կարեմ սահմանել նորոգոյն ինչ ('ի 21 Սեպտեմբերի)։ Լատինք ոչ խրատու Դատաւորին անսային և ոչ գալատեան հրամանին համբերէին. արգելին զաւել ածելն Հայոց յԱյրին Ծննդեան, զոր սահմանեալ էին յաւուր բաժանորդութեան. և մինչ պատաղեալ էին Հայք զաղմըկաւ սորա 'ի դատարանն, ժողովեալ նոցա զՖէլլահս Բեթզեհէմի ստիպէին զնոսա բռնի անցանել 'ի վերայ սփռոցացն Հայոց։ Դատաւորք յորդորէին զՀայս թողուլ Լատինաց անցանել ժողովրդովք 'ի տեղւոջէ անտի, լռել առ ժամանակ մի մինչեւ դադարիլ խռովութեան, խոնարհեցան Հայք 'ի բանս նոցա և ջանային հաշտիլ ընդ Լատինս, այլ նոքա ոխացեալ 'ի սրտէ ոչ երբէք մերձենային, և առեալ զոմանս 'ի Դատաւորէն եւ 'ի Քաղաքապետէն զնացին 'ի Ս. Ցարութիւն և խօսէին վասն սեան եւ խաչելութեան պատկերին, այլ Հայք ընդդէմ կացին, եւ մնաց խնդիրն որպէս և էրն։ Եկին 'ի սոյն աւուրս յերուսաղէմ երկոքին Փոխանորդք նոցին՝ Կղեմէնթ 'ի Դամասկոսէ և Ֆրա Մանուէլ յԵգիպտոսէ, որ իբր բարեկամ էր Հայոց, բայց ոչ կարէին մերձենալ առ նոսա ըստ առաջնոյն յերկիւղէ միաբանաց նոցին։

Եւ զկնի աւուրց ինչ յաւելին Լատինք և զայլ ինն խըժդըժութիւն (յ8 Նոյեմբերի)։ Զի յերեկոյի կիւրակէի նըստեալ եկեղեցականացն Հայոց յեկեղեցւոջ ընթեռնուին զՑայսմաւուրն, ոմանք 'ի Լատինաց եկեալ ստիպէին զնոսա յառնել, զի եկեղեցականք նոցին հանդիսիւ ունէին անցանել անտի, և նոցա ցուցեալ զճանապարհն ասէին բաւական լինել նովաւ. սրտմտեալ ընդ այս Լատինաց՝ ժողովեցին անդ զՖէլլահս և խոսանեցին զժամերգութիւնն Հայոց և սկսան կոգել ընդ նոսա։ Եւ Փոխանորդ նոցին կորզեալ զսուր այլազգւոյ ուրուք Մէհեմմէտ Շախտուր ասացեալ, որ դիպաւ անդ 'ի Նմին ժամանակի՝ յարձակեցաւ 'ի վերայ Հայոց, և քաջալերէր զՖէլլահսն և ասէր. հարէք մի երկնչիք, և խառնեցան երկոքին կողմն և հարկանէին զմիմեանս, եւ վիրաւորեալ Տիգրանակերտցի Ցարութիւն վարդապետի տնկաւ անդ, և Լատինաց տեսեալ զարիւնն՝ խոյս եռուն անտի՝ և ազդ արարին Տեսչի իւրեանց։ Վիրա-